բայց՝ զիջանելով նորա թախանձանքին՝ պահեց նորան բանտում։

172 թ. Հարուն Ռաշիդ յետ կոչեց Եզիդ ի. Մազեադին Հայաստանից եւ նորա տեղ դրեց Օբայդալլահ ի. Մահդիին։

176 թ. Հարուն նշանակեց Ֆադլ ի. Եահեային կուսակալ Ջաբալի, Տաբարիստանի, Դմբաւենդի, Կումիսի, Հայաստանի եւ Ատրպատականի վերայ։

182 թ. Ֆադլ ի. Եահեայ կնութեան առաւ խաքանի՝ Խազարաց թագաւորի՝ դուստրը, որը սակայն մեռաւ Պարտաւում։ Նոյն ժամանակ Հայաստանի կառավարիչն էր Սայիդ ի. Սալմ ի. Քոտայբայ Բահլի։

184 թ. Խազարք արշաւեցին խաքանի դստեր պատճառով Բաբ-էլ-աբուաբից, յարձակեցան (Հայաստանի սահմաններում ապրող) մուսլիմների եւ քրիստոնեաների վերայ եւ գերեցին Նոցանից աւելի քան՝ ինչպէս պատմում են՝ 100.000 մարդ, երկրին հասուցանելով այնպիսի աղէտներ որոց նմանը իսլամութեան (պատմութեան) մէջ տակաւին լուած չէր։ Ռաշիդ դրեց Հայաստանի եւ Ատրպատականի վերայ Եզիդ ի. Մազեադին կառավարիչ, տալով նորան ուժեղ զօրք, իսկ Խուզայմայ ի. Խազիմին ուղարկեց Մծբին՝ Հայաստանի բնակիչներին օգնութեան։

185 թ. Եզիդ ի. Մազեադ վախճանեցաւ Պարտաւում։ Հարուն նշանակեց նորա տեղ Ասադ ի. Եզիդին։

205 թ. Մամուն ամիրապետը դրեց Խայ ի. Մուհամմեդ ի. Աբուխալիդին կառավարիչ Հայաստանի եւ Ատրպատականի վերայ, որ պատերազմեցաւ Բաբեկի հետ։

209 թ. Մամուն նշանակեց Սադաբայ ի. Ալի Մարուվ Բազուրաքին կառավարիչ Հայաս-